

ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի
(ԵՄ) 2015/1094 ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ****«Մասնագիտացված սառնարանային պահարանների
էներգապիտակավորման մասին» Եվրոպական պառլամենտի
և Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող
(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը,
հաշվի առնելով «Էներգասպառող արտադրանքի կողմից սպառվող էներգիայի եւ
այլ ռեսուրսների վերաբերյալ՝ պիտակավորման եւ արտադրանքի մասին
ստանդարտ տեղեկությունների ներկայացման միջոցով նշում կատարելու մասին»
Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը՝ եւ
մասնավորապես՝ դրա 10-րդ հոդվածը,

քանի որ՝

- 1) 2010/30/ԵՄ հրահանգով պահանջվում է, որ Հանձնաժողովն ընդունի
էներգիա սպառող այնպիսի արտադրանքի պիտակավորման հետ կապված
պատվիրակված ակտեր, որն ունի էներգիայի խնայողության զգալի
պոտենցիալ եւ ներկայացնում է համարժեք ֆունկցիոնալությամբ
արդյունավետության մակարդակներում էական տարբերություն.

¹ ՊՏ թիվ L 153, 18.6.2010թ., էջ 1:

- 2) մասնագիտացված սառնարանային պահարանների սպառած էներգիան կազմում է Միությունում ընդհանուր էներգիայի պահանջարկի զգալի մասը, իսկ համարժեք ֆունկցիոնալությամբ մասնագիտացված սառնարանային պահարանների դեպքում էներգաարդյունավետության մասով առկա են էական անհամապատասխանություններ: Դրանց էներգասպառումը նվազեցնելու հնարավորությունները զգալի են: Հետեւաբար մասնագիտացված սառնարանային պահարանները պետք է համապատասխանեն էներգապիտակավորման պահանջներին.
- 3) պետք է սահմանվեն պիտակավորման եւ մասնագիտացված սառնարանային պահարանների էներգաարդյունավետության վերաբերյալ ստանդարտ տեղեկությունների մասին ներդաշնակեցված դրույթներ, որոնք արտադրողների համար խթան կհանդիսանան այս արտադրանքի էներգաարդյունավետությունը բարելավելու, վերջնական սպառողների կողմից էներգաարդյունավետ արտադրանք ձեռք բերելը խրախուսելու եւ ներքին շուկայի գործունեությանը նպաստելու համար.
- 4) ակնկալվում է, որ սույն կանոնակարգի եւ Հանձնաժողովի 2015/1095 (ԵՄ) կանոնակարգի¹ համակցված ազդեցության արդյունքում մինչեւ 2020 թվականը տարեկան կխնայվի մոտավորապես 1,8 ՏՎտ/ժ, իսկ մինչեւ 2030 թվականը՝ 4,1 ՏՎտ/ժ էլեկտրաէներգիա, ինչը համապատասխանում է CO₂-ին համարժեք 0,7 եւ 1,4 միլիոն տոննային՝ ի համեմատություն այն իրավիճակի, թե ինչ կլիներ, եթե ոչ մի միջոց չձեռնարկվեր.
- 5) պիտակի վրա ներկայացված տեղեկությունները պետք է ստացվեն չափման հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի ընթացակարգերի միջոցով, որոնք

¹ Մասնագիտացված սառնարանային պահարաններին, արագ սառեցման պահարաններին, գոլորշեցուցիչներին եւ տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումներին ներկայացվող էկոնախազմման պահանջների մասով Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009/125/ԵՄ հրահանգն իրականացնող՝ Հանձնաժողովի 2015 թվականի մայիսի 5-ի 2015/1095 (ԵՄ) կանոնակարգ (տե՛ս սույն պաշտոնական տեղեկագրի 19-րդ էջը):

հաշվի են առնում համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից մեթոդները, այդ թվում՝ առկայության դեպքում՝ ստանդարտացման եվրոպական կազմակերպությունների կողմից ընդունված ներդաշնակեցված ստանդարտները, որոնք թվարկված են Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1025/2012 կանոնակարգի (ԵՄ) I հավելվածում¹.

- 6) սույն կանոնակարգում պետք է նշվի մասնագիտացված սառնարանային պահարանների արտադրանքի պիտակների միասնական նախագծումն ու բովանդակությունը.
- 7) բացի այդ, սույն կանոնակարգում պետք է նշվեն արտադրանքի տեղեկաթերթիկի կամ տեխնիկական փաստաթղթերի մասով մասնագիտացված սառնարանային պահարաններին ներկայացվող պահանջներ.
- 8) ավելին, սույն կանոնակարգով պետք է նշվեն մասնագիտացված սառնարանային պահարանների հեռահար վաճառքի ցանկացած տեսակի դեպքում եւ այդպիսի արտադրանքի ցանկացած գովազդում եւ տեխնիկական գովազդային-քարոզչական նյութերում տրամադրվելիք տեղեկություններին ներկայացվող պահանջները.
- 9) աննպատակահարմար է նախատեսել սույն կանոնակարգի դրույթների վերանայում՝ հաշվի առնելով տեխնոլոգիական առաջընթացը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

¹ «Եվրոպական ստանդարտացման մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 1025/2012 (ԵՄ) կանոնակարգ՝ Խորհրդի 89/686/ԵՏՀ եւ 93/15/ԵՏՀ հրահանգներում եւ Եվրոպական պառլամենտի ու Խորհրդի 94/9/ԵՀ, 94/25/ԵՀ, 95/16/ԵՀ, 97/23/ԵՀ, 98/34/ԵՀ, 2004/22/ԵՀ, 2007/23/ԵՀ, 2009/23/ԵՀ եւ 2009/105/ԵՀ հրահանգներում փոփոխություն կատարող եւ Խորհրդի 87/95/ԵՏՀ որոշումն ու Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 1673/2006/ԵՀ որոշումն ուժը կորցրած ճանաչող (ՊՏ թիվ L 316, 14.11.2012թ., էջ 12):

Հոդված 1

Կարգավորման առարկան եւ գործողության ոլորտը

1. Սույն կանոնակարգով սահմանվում են մասնագիտացված սառնարանային պահարանների պիտակավորմանը, ինչպես նաեւ արտադրանքի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների տրամադրմանը ներկայացվող պահանջները:
2. Սույն կանոնակարգը կիրառվում է էլեկտրական ցանցից սնվող մասնագիտացված սառնարանային պահարանների, այդ թվում՝ սննդամթերքի եւ կենդանական կերերի սառեցման համար վաճառվող պահարանների նկատմամբ:
3. Սույն կանոնակարգը չի կիրառվում հետեւյալ արտադրանքների նկատմամբ՝
 - ա) մասնագիտացված սառնարանային պահարաններ, որոնց առաջնային սնուցումն իրականացվում է էլեկտրաէներգիայից տարբեր էներգիայի աղբյուրներից.
 - բ) մասնագիտացված սառնարանային պահարաններ, որոնք աշխատում են հեռահար կոնդենսացնող սարքի հետ.
 - գ) բաց պահարաններ, որոնց դեպքում բաց լինելը դրանց հիմնական ֆունկցիոնալությանը ներկայացվող էական պահանջ է.
 - դ) սննդի վերամշակման համար հատուկ նախագծված պահարաններ, որոնց դեպքում զուտ մեկ խցիկի առկայությունը, որի զուտ ծավալը պահարանի ընդհանուր զուտ ծավալի 20 տոկոսից պակաս է, եւ որը հատուկ նախագծված է սննդի վերամշակման համար, բավարար չէ բացառման համար.
 - ե) սառեցված սննդամթերքը վերահսկելի եղանակով միայն հալեցնելու համար հատուկ նախագծված պահարաններ, որոնց դեպքում զուտ մեկ խցիկի առկայությունը, որը հատուկ նախագծված է սառեցված սննդամթերքը հսկողության ենթակա եղանակով հալեցնելու համար, բավարար չէ բացառման համար.

- զ) աղջանների համար ցուցապահարաններ.
- է) սառնարանային ցուցասեղաններ եւ նմանատիպ ձեւի այլ պահարաններ, որոնք, սառեցումից եւ պահպանումից բացի, հիմնականում նախատեսված են սննդամթերքի ցուցադրման եւ վաճառքի համար.
- ը) պահարաններ, որոնց համար գոլորշու սեղմման եւ սառեցման շրջափուլ չի կիրառվում.
- թ) պատվերով պատրաստված մասնագիտացված սառնարանային պահարաններ, որոնք պատրաստված են մեկանգամյա օգտագործման սկզբունքով՝ անհատական հաճախորդի մասնագրով, եւ համանման չեն մասնագիտացված սառնարանային այլ պահարանների, որոնք նկարագրված են I հավելվածի 9-րդ սահմանման մեջ.
- ժ) սառնարան-սառցարաններ.
- ժա) ստատիկ օդի պահարաններ.
- ժբ) ներկառուցված պահարաններ.
- ժգ) կոնտեյներային սառնարանային դարակաշարեր եւ միջանցիկ պահարաններ.
- ժե) սառցարան-կրպակներ:

Հոդված 2

Սահմանումները

Սույն կանոնակարգի համար կիրառվում են հետեւյալ սահմանումները.

- ա) «մասնագիտացված սառնարանային պահարան» նշանակում է մեկուսացված սառեցնող սարք, որը բաղկացած է մեկ կամ ավելի դռնով կամ դարակներով մուտքի հնարավորություն ապահովող մեկ կամ ավելի

խցիկներից, կարող է սահմանված ժամկետների ընթացքում շարունակաբար պահպանել սննդամթերքի ջերմաստիճանը՝ պաղեցման կամ սառեցման աշխատանքային ջերմաստիճանում՝ օգտագործելով գոլորշու խտացման շրջափուլ, եւ նախատեսված է սննդամթերքը ոչ կենցաղային միջավայրերում պահպանելու, այլ ոչ թե սպառողին ցուցադրելու կամ նրան հասանելի դարձնելու համար.

- բ) «սննդամթերք» նշանակում է սնունդ, դրա բաղադրիչներ, խմիչքներ, այդ թվում՝ գինի եւ առաջնային սպառման համար նախատեսվող այլ ուտելիք կամ ըմպելիք, որի համար պահանջվում է սառեցում կոնկրետ ֆիքսված ջերմաստիճանում.
- գ) «ներկառուցված պահարան» նշանակում է ֆիքսված մեկուսացված սառեցնող սարք, որը նախատեսված է պահարանում, պատի մեջ նախապատրաստված փորակում կամ նմանատիպ վայրում տեղադրելու համար, եւ որը պետք է վերջնական կահավորվի.
- դ) «կոնտեյներային սառնարանային դարակաշար» նշանակում է մասնագիտացված սառնարանային պահարան, որն ունի մեկ եզակի խցիկ, որը թույլ է տալիս ներհրել արտադրանքի անվավոր ագրեգատները.
- ե) «միջանցիկ պահարան» նշանակում է մասնագիտացված սառնարանային պահարան, որը մուտքի հասանելիություն ունի երկու կողմերից.
- զ) «ստատիկ օդի պահարան» նշանակում է մասնագիտացված սառնարանային պահարան, որը չունի օդի ներքին հարկադիր շրջանառություն, հատուկ նախագծված է ջերմաստիճանի նկատմամբ զգայուն սննդամթերքը պահպանելու համար կամ առանց հերմետիկ փաթեթվածքի պահվող սննդամթերքի վրա չորացնող ազդեցությունից խուսափելու համար այն դեպքում, երբ պահարանի ներսում գտնվող ստատիկ օդի միակ խցիկը բավարար չէ պահարանը որպես ստատիկ օդի պահարան նախատեսելու համար.

- է) «բաց պահարան» նշանակում է մասնագիտացված սառնարանային պահարան, որի սառնարանային հատվածը հասանելի է դրսից՝ առանց դուռը կամ դարակը բացելու, որում առանց դուռը կամ դարակը բացելու՝ զուտ դրսից հասանելի մեկ խցիկի առկայությունը, որի զուտ ծավալը մասնագիտացված սառնարանային պահարանի ընդհանուր զուտ ծավալի 20 %-ից պակաս է, բավարար չէ բաց պահարանը որպես այդպիսին որակելու համար.
- ը) «աղցանների համար ցուցապահարան» նշանակում է մասնագիտացված սառնարանային պահարան՝ մեկ կամ ավելի դիմային դռնով կամ դարակով՝ ուղղահայաց հարթությամբ, որի վերին մակերեսային առկա են փորվածքներ, որոնցում կարող են տեղադրվել ժամանակավոր պահպանման զետեղարաններ այնպիսի սննդամթերքի դյուրին հասանելիությամբ պահպանումն ապահովելու համար, ինչպիսիք են (որոնցով, սակայն, չեն սահմանափակվում) պիցցայի տոպպինգները համ աղցանի պարագաները.
- թ) «համակցված խցիկ» նշանակում է մասնագիտացված սառնարանային պահարան, որը բաղկացած է սննդամթերքի սառեցման եւ պահպանման համար տարբեր ջերմաստիճաններ ունեցող երկու կամ ավելի խցիկներից.
- ժ) «սառնարան–սառցարան» նշանակում է համակցված տիպի պահարան, որը բաղկացած է բացառապես պաղեցման աշխատանքային ջերմաստիճանի համար նախատեսված առնվազն մեկ խցիկից եւ բացառապես սառեցման աշխատանքային ջերմաստիճանի համար նախատեսված մեկ խցիկից.
- ժա) «սառնարանային կրպակ» նշանակում է սննդամթերքի սառնարան, որտեղ խցիկը (խցիկները) մատչելի է (մատչելի են) սարքի վերին հատվածից, կամ որն ունի ինչպես վերելից բացվող, այնպես էլ ուղղահայաց տեսակի խցիկներ, որտեղ, սակայն, վերելից բացվող տեսակի

խցիկի (խցիկների) համախառն ծավալը գերազանցում է տեխնիկայի ընդհանուր համախառն ծավալի 75 տոկոսը:

Հոդված 3

Մատակարարների պարտականությունները եւ ժամանակացույցը

1. 2016 թվականի հուլիսի 1-ից մասնագիտացված սառնարանային պահարանները շուկայահանող կամ շահագործող մատակարարները պետք է ապահովեն, որ բավարարվեն հետևյալ պահանջները՝
 - ա) III հավելվածով սահմանված ձեւաչափ ունեցող եւ տեղեկություններ պարունակող տպագրված պիտակը տրամադրվում է յուրաքանչյուր մասնագիտացված սառնարանային պահարանի համար.
 - բ) յուրաքանչյուր մասնագիտացված սառնարանային պահարանի մոդելի համար դիլերներին տրամադրվում է III հավելվածի 2-րդ կետով սահմանված ձեւաչափ ունեցող եւ տեղեկություններ պարունակող էլեկտրոնային պիտակ.
 - գ) տրամադրվում է արտադրանքի տեղեկաթերթիկ, ինչպես սահմանված է IV հավելվածում.
 - դ) մասնագիտացված սառնարանային պահարանի յուրաքանչյուր մոդելի համար դիլերներին տրամադրվում է IV հավելվածով սահմանված արտադրանքի էլեկտրոնային տեղեկաթերթիկ.
 - ե) անդամ պետությունների մարմինների հարցմամբ տրամադրվում են V հավելվածով սահմանված տեխնիկական փաստաթղթերը.
 - զ) մասնագիտացված սառնարանային պահարանի որոշակի մոդելին վերաբերող եւ էներգասպառման կամ գնի մասին տեղեկություններ պարունակող ցանկացած գովազդ ներառում է այդ մոդելի համար էներգաարդյունավետության դասի նշում.

է) մասնագիտացված սառնարանային պահարանի որոշակի մոդելի վերաբերող եւ դրան բնորոշ տեխնիկական պարամետրերը նկարագրող ցանկացած տեխնիկական գովազդային-քարոզչական նյութ ներառում է այդ մոդելի համար էներգաարդյունավետության դասի նշում:

2. III հավելվածում նշված պիտակները տրամադրվում են շուկայահանված մասնագիտացված սառնարանային պահարանների հետ՝ հետեւյալ ժամանակացույցին համապատասխան՝

- 2016 թվականի հուլիսի 1-ից՝ պիտակ 1 կամ պիտակ 2.
- 2019 թվականի հուլիսի 1-ից՝ պիտակ 2:

Հոդված 4

Դիլերների պարտականությունները

Մասնագիտացված սառնարանային պահարանների դիլերները ապահովում են, որ բավարարվեն հետեւյալ պահանջները՝

- ա) վաճառքի կետում մասնագիտացված սառնարանային պահարանի վրա՝ սարքի դրսի մասի առջեւի կամ վերեւի հատվածներում, փակցվում է մատակարարների կողմից 3(1) հոդվածին համապատասխան տրամադրված պիտակն այնպես, որ այն պարզորեն տեսանելի լինի.
- բ) այն դեպքում, երբ վերջնական սպառողը չի կարող տեսնել ցուցադրված արտադրանքը, վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի համար առաջարկված մասնագիտացված սառնարանային պահարանները շուկայահանվում են մատակարարների կողմից VI հավելվածին համապատասխան տրամադրված տեղեկություններով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առաջարկը ներկայացվել է համացանցով, ինչի դեպքում կիրառվում են VII հավելվածի դրույթները.

- գ) մասնագիտացված սառնարանային պահարանի որոշակի մոդելին վերաբերող եւ էներգասպառման կամ գնի մասին տեղեկություններ պարունակող ցանկացած գովազդ ներառում է այդ մոդելի համար էներգաարդյունավետության դասի նշում.
- դ) մասնագիտացված սառնարանային պահարանի կոնկրետ որոշակի մոդելին վերաբերող եւ դրան բնորոշ տեխնիկական պարամետրերը նկարագրող ցանկացած տեխնիկական գովազդային-քարոզչական նյութ ներառում է այդ մոդելի համար էներգաարդյունավետության դասի նշում:

Հոդված 5

Չափումը եւ հաշվառումը

3-րդ եւ 4-րդ հոդվածների համաձայն տրամադրվելիք տեղեկությունները ձեռք են բերվում հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի չափման եւ հաշվարկման ընթացակարգերով, որոնք հիմնված են համընդհանուր ճանաչում ունեցող չափման եւ հաշվարկման՝ VII հավելվածով սահմանված ժամանակակից մեթոդների վրա:

Հոդված 6

Շուկայի վերահսկողության նպատակներով իրականացվող ստուգման ընթացակարգը

Էներգաարդյունավետության հայտարարված դասին տարեկան էներգասպառման եւ ծավալների համապատասխանությունը գնահատելիս անդամ պետությունները կիրառում են X հավելվածով սահմանված ընթացակարգը:

Հոդված 7

Վերանայումը

Հանձնաժողովը վերանայում է սույն կանոնակարգը տեխնոլոգիական առաջընթացի լույսի ներքո ոչ ուշ, քան դրա ուժի մեջ մտնելուց հինգ տարի հետո: Վերանայման ժամանակ, մասնավորապես, գնահատվում են՝

- ա) շուկայի՝ տարբեր տեսակի սարքերի մասնաբաժնում բոլոր էական փոփոխությունները.
- բ) X հավելվածով սահմանված թույլատրելի շեղումները.
- գ) սառնարան-սառցարանների ստանդարտ տարեկան էներգասպառումը որոշող մեթոդը ներկայացնելու նպատակահարմարությունը.
- դ) կանգնակ-պահարանների ստանդարտ տարեկան էներգասպառման փոփոխված մեթոդը ներկայացնելու նպատակահարմարությունը:

Հոդված 8

Ուժի մեջ մտնելը եւ կիրառությունը

Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության *պաշտոնական տեղեկագրում* դրա հրապարակմանը հաջորդող քսաներորդ օրը:

Սույն կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում 2000 թվականի մայիսի 29-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Նախագահ

Ժան-Կլոդ ՅՈՒՆԿԵՐ

*ՀԱՎԵԼՎԱԾ I***II-X հավելվածների համար կիրառելի սահմանումները**

II-X հավելվածների նպատակով կիրառվում են հետևյալ սահմանումները.

- 1) «զուտ ծավալ» նշանակում է առավելագույն բեռնվածքի դեպքում սննդամթերք պարունակող ծավալը.
- 2) «պաղեցման աշխատանքային ջերմաստիճան» նշանակում է, որ խցիկում պահվող սննդամթերքի ջերմաստիճանը շարունակաբար պահպանվում է $-1\text{ }^{\circ}\text{C}$ -ից $5\text{ }^{\circ}\text{C}$ ջերմաստիճանի սահմաններում.
- 3) «սառեցման աշխատանքային ջերմաստիճան» նշանակում է, որ խցիկում պահվող սննդամթերքի ջերմաստիճանը շարունակաբար պահպանվում է $-15\text{ }^{\circ}\text{C}$ -ից ցածր ջերմաստիճանում, որը համարվում է ամենատաք փաթեթվածքի փորձարկման ամենաբարձր ջերմաստիճանը.
- 4) «բազմակի օգտագործման խցիկ» նշանակում է, որ մասնագիտացված սառնարանային պահարանի կամ նույն պահարանի առանձին խցիկի համար կարելի է սահմանել տարբեր ջերմաստիճաններ՝ պաղեցված կամ սառեցված սննդամթերքի համար.
- 5) «ուղղահայաց պահարան» նշանակում է մասնագիտացված սառնարանային պահարան, որի ընդհանուր բարձրությունը հավասար է 1 050 մմ-ի կամ բարձր է դրանից, ունի միեւնույն խցիկին մուտքի հասանելիություն ապահովող մեկ կամ մի քանի դիմային դռներ կամ դարակներ.
- 6) «կանգնակ տիպի պահարան» նշանակում է մասնագիտացված սառնարանային պահարան, որի ընդհանուր բարձրությունը ցածր է 1 050 մմ-ից եւ որն ունի միեւնույն խցիկին մուտքի հասանելիություն ապահովող մեկ կամ ավելի դիմային դռներ կամ դարակներ.

- 7) «թույլ հզորությամբ պահարան», նույնպես հայտնի որպես «կիսամասնագիտացված պահարան» նշանակում է մասնագիտացված սառնարանային պահարան, որը միայն կարող է իր բոլոր խցերում (խցիկում) շարունակաբար պահպանել պաղեցման կամ սառեցման աշխատանքային ջերմաստիճան՝ կլիմայական 3-րդ դասին համապատասխանող միջավայրի պայմաններում, ինչպես մանրամասն նշված է IX հավելվածի 3-րդ աղյուսակում. եթե պահարանը կարող է ջերմաստիճանը պահպանել կլիմայական 4-րդ դասին համապատասխանող միջավայրի պայմաններում, ապա այն չի համարվում թույլ հզորությամբ պահարան.
- 8) «գերհզոր պահարան» նշանակում է մասնագիտացված սառնարանային պահարան, որը պաղեցման կամ սառեցման աշխատանքային ջերմաստիճանը կարող է շարունակաբար պահպանել իր բոլոր խցերում (խցիկում), կլիմայական 5-րդ դասին համապատասխանող միջավայրի պայմաններում, ինչպես մանրամասն նշված է IX հավելվածի 3-րդ աղյուսակում.
- 9) «մասնագիտացված սառնարանային պահարանին համարժեք պահարան» նշանակում է մասնագիտացված սառնարանային պահարանի մոդել, որը շուկայահանվել է միեւնույն զուտ ծավալով, միեւնույն տեխնիկական, արդյունավետության եւ շահագործման բնութագրերով ու միեւնույն տիպի խցիկներով եւ ծավալներով, ինչ մասնագիտացված սառնարանային պահարանի մեկ այլ մոդել, որը շուկայահանվել է տարբեր առետրային ծածկագրի համարների ներքո, միեւնույն արտադրողի կողմից:

ՀԱՎԵԼՎԱԾ II

Էներգախնայողության դասերը

Մասնագիտացված սառնարանային պահարանի դասը որոշվում է դրա էներգաարդյունավետության ինդեքսին (ԷԱԻ) համապատասխան, ինչպես սահմանված է 1-ին աղյուսակով:

Աղյուսակ 1

**Մասնագիտացված սառնարանային պահարանի
էներգաարդյունավետության դասերը**


Էներգաարդյունավետության դասը	ԷԱԻ
A+++	$\text{ԷԱԻ} < 5$
A++	$5 \leq \text{ԷԱԻ} < 10$
A+	$10 \leq \text{ԷԱԻ} < 15$
A	$15 \leq \text{ԷԱԻ} < 25$
B	$25 \leq \text{ԷԱԻ} < 35$
C	$35 \leq \text{ԷԱԻ} < 50$
D	$50 \leq \text{ԷԱԻ} < 75$
E	$75 \leq \text{ԷԱԻ} < 85$
F	$85 \leq \text{ԷԱԻ} < 95$
G	$95 \leq \text{ԷԱԻ} < 115$

ԷԱԻ-ն հաշվարկվում է VIII հավելվածում մանրամասն նշված ձևով:

ՀԱՎԵԼՎԱԾ III

Պիտակները

- 1. Պիտակ 1՝ A-ից G էներգաարդյունավետության դասերի մասնագիտացված սառնարանային պահարաններ



Պիտակի վրա ներառվում են հետևյալ տեղեկությունները՝

- I. մատակարարի անունը կամ ապրանքային նշանը.
- II. մատակարարի մոդելի նույնականացուցիչը.

- III. II հավելվածին համապատասխան որոշված էներգաարդյունավետության դասը. էներգաարդյունավետության դասը պարունակող սլաքի ծայրը պետք է զետեղված լինի նույն բարձրության վրա, ինչ համապատասխան էներգաարդյունավետության դասի սլաքի ծայրը.
- IV. էներգիայի վերջնական սպառման շրջանակներում կՎտժ-ով էլեկտրաէներգիայի տարեկան սպառումը՝ հաշվարկված IX հավելվածին համապատասխան եւ կլորացված դեպի ամենամոտ ամբողջ թիվը.
- V. պաղեցման աշխատանքային ջերմաստիճանով աշխատող պաղեցված բոլոր խցիկների զուտ ծավալի հանրագումարը՝ արտահայտված լիտրով. Եթե պաղեցման աշխատանքային ջերմաստիճանով աշխատող ոչ մի պաղեցված խցիկ առկա չէ, մատակարարն արժեքի փոխարեն հայտնում է «- L»-ը.
- VI. սառեցման աշխատանքային ջերմաստիճանով աշխատող սառեցված բոլոր խցիկների զուտ ծավալի հանրագումարը՝ լիտրով արտահայտված. Եթե սառեցված աշխատանքային ջերմաստիճանով աշխատող ոչ մի սառեցված խցիկ առկա չէ, մատակարարն արժեքի փոխարեն հայտնում է «- L»-ը.
- VII. կլիմայական դասը (3, 4 կամ 5)՝ չոր ջերմաչափի համապատասխան ջերմաստիճանի (արտահայտված °C-ով) եւ հարաբերական խոնավության (արտահայտված տոկոսով) հետ միասին, ինչպես նշված է IX հավելվածի 3-րդ աղյուսակում:

Պիտակի ձեւը պետք է համապատասխանի 3-րդ կետին: Շեղում կատարելով, եթե մոդելին շնորհիվ է «ԵՄ էկոպիտակ»¹, ապա կարող է ավելացվել ԵՄ էկոպիտակի պատճենը:

¹ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 66/2010 (ԵՇ) «ԵՄ էկոպիտակի մասին» կանոնակարգի համաձայն (ՊՏ L 27, 30.1.2010թ., էջ 1):


2. Պիտակ 2՝ A+++ -ից G էներգաարդյունավետության դասերի մասնագիտացված սառնարանային պահարաններ



1-ին կետում նշված տեղեկությունները գետեղվում են այս պիտակի վրա:

Պիտակի ձեւը պետք է համապատասխանի 3-րդ կետին: Շեղում կատարելով, եթե մոդելին տրվել է «ԵՄ էկոպիտակ», ապա կարող է ավելացվել ԵՄ էկոպիտակի պատճենը:

3. Մասնագիտացված ստանդարնային պահարանների համար նախատեսված պիտակի ձեւը պետք է լինի հետևյալը՝



որտեղ՝

ա) պիտակը պետք է ունենա առնվազն 110 մմ լայնություն եւ 220 մմ բարձրություն: Եթե պիտակը տպագրվում է ավելի մեծ ձեւաչափով, դրա բովանդակությունը, այնուամենայնիվ, պետք է համապատասխանի վերը նշված մասնագրերին.

բ) պիտակի հետին պլանը պետք է լինի սպիտակ.

գ) գույները պետք է լինեն ԿԿԴՄ՝ կապտականաչ, կարմրամանուշակագույն, դեղին, սեւ, օրինակ՝ 00-70-X-00-ը ցույց է տալիս 0 տոկոս կապտականաչ, 70 տոկոս կարմրամանուշակագույն, 100 տոկոս դեղին, 0 տոկոս սեւ.

դ) պիտակը պետք է համապատասխանի հետեւյալ բոլոր մասնագրերին (թվերը վերաբերում են վերոնշյալ պատկերին)՝

1. **ԵՄ պիտակի եզրագիծ՝** 5 կետաչափ, գույն՝ 100 տոկոս կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3,5 մմ,

2. **ԵՄ լոգո (պատկերանիշ)՝** գույներ՝ X-80-00-00 եւ 00-00-X-00,

3. **Էներգապիտակ՝** գույն՝ X-00-00-00,

Ներկայացված գրաֆիկական պատկերը (ԵՄ լոգո + էներգապիտակ)՝ 92 մմ լայնություն x 17 մմ բարձրություն,

4. **Պատկերանիշի տակ գտնվող գիծը՝** 1 կետաչափ, գույն՝ 100 տոկոս կապտականաչ, 92,5 մմ երկարություն,

5. **A-ից G սանդղակ՝**

Սլաք՝ 7 մմ բարձրություն, 0,75 մմ տարածություն , գույներ՝

Ամենաբարձր դասը՝ X-00-X-00,

Երկրորդ դասը՝ 70-00-X-00,

Երրորդ դասը՝ 30-00-X-00,

Չորրորդ դասը՝ 00-00-X-00,

Հինգերորդ դասը՝ 00-30-X-00,

Վեցերորդ դասը՝ 00-70-X-00,

Վերջին դասերը՝ 00-X-X-00:

Տեքստը՝ «Կալիբրի» տառատեսակ, թավ, 19 կետաչափ, մեծատառ եւ սպիտակ, «+» պայմանանշան, «Կալիբրի» տառատեսակ, թավ 13 կետաչափ, տողավերելի, սպիտակ, մեկ շարքի վրա.

6. Էներգախնայողության դասը՝

Սլաք՝ 26 մմ լայնություն x 14 մմ բարձրություն, 100 տոկոս սեւ,

Տեքստը՝ «Կալիբրի» տառատեսակ, թավ, 29 կետաչափ, մեծատառ եւ սպիտակ, «+» պայմանանշան, «Կալիբրի» տառատեսակ, թավ, 18 կետաչափ, տողավերելի, սպիտակ եւ մեկ շարքի վրա,

7. Էներգիա՝

Տեքստը՝ «Կալիբրի» տառատեսակ, սովորական, 11 կետաչափ, մեծատառեր, 100 տոկոս սեւ,

8. Էներգիայի տարեկան սպառում՝

Եզրագիծ՝ 2 կետարափ, գույն՝ 100 տոկոս կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3,5 մմ,

Արժեքը՝ «Կալիբրի» տառատեսակ, թավ, 32 կետաչափ, 100 տոկոս սեւ,

2-րդ տող՝ «Կալիբրի» տառատեսակ, սովորական, 14 կետաչափ, 100 սեւ,

9. Պաղեցման աշխատանքային ջերմաստիճանով աշխատող բոլոր

խցիկների զուտ ծավալի հանրագումարը՝

Եզրագիծ՝ 2 կետաչափ, գույն՝ 100 տոկոս կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3,5 մմ,

Արժեքը՝ «Կալիբրի» տառատեսակ, թավ, 25 կետաչափ, 100 տոկոս սեւ եւ «Կալիբրի» տառատեսակ, սովորական, 17 կետաչափ, 100 տոկոս սեւ,

10. Կլիմայական դասը՝ չոր ջերմաչափի համապատասխան ջերմաստիճանի եւ հարաբերական խոնավության հետ միասին՝

Եզրագիծ՝ 2 կետաչափ, գույն՝ 100 տոկոս կապտականաչ, ` կլոր անկյուններ՝ 3,5 մմ,

Արժեքը՝ «Կալիբրի» տառատեսակ, թավ, 25 կետաչափ, 100 տոկոս սեւ,

2-րդ տող՝ «Կալիբրի» տառատեսակ, սովորական, 14 կետաչափ, 100 տոկոս սեւ,

11. Սառեցման աշխատանքային ջերմաստիճանով աշխատող բոլոր խցիկների զուտ ծավալի հանրագումարը՝

Եզրագիծ՝ 2 կետաչափ, գույն՝ 100 տոկոս կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3,5 մմ,

Արժեքը՝ «Կալիբրի» տառատեսակ, թավ, 25 կետաչափ, 100 տոկոս սեւ, եւ «Կալիբրի» տառատեսակ, սովորական, 17 կետաչափ, 100 տոկոս սեւ,

12. Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.

13. Մատակարարի մոդելի նույնականացուցիչը.

14. Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը եւ մոդելի նույնականացուցիչը պետք է տեղավորվեն 90 x 15մմ տարածքում.

15. Կանոնակարգի համարը

Տեքստը՝ «Կալիբրի» տառատեսակ, թավ, 11 կետաչափ:

*ՀԱՎԵԼՎԱԾ IV***Արտադրանքի տեղեկաթերթիկը**

1. Մասնագիտացված սառնարանային պահարանի տեղեկաթերթիկում պարունակվող տեղեկությունները ներկայացվում են հետևյալ հաջորդականությամբ եւ ներառվում արտադրանքի վերաբերյալ բրոշյուրում կամ արտադրանքի հետ ներկայացվող այլ նյութերում՝
 - ա) մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.
 - բ) մատակարարի մոդելի նույնականացուցիչը.
 - գ) մոդելի տեսակը՝ I հավելվածում նշված սահմանումներին համապատասխան.
 - դ) մոդելի էներգաարդյունավետության դասը եւ էներգաարդյունավետության ինդեքսը՝ որոշված II հավելվածին համապատասխան.
 - ե) եթե թիվ 66/2010 կանոնակարգի (ԵՀ) համաձայն մոդելին տրվել է «ԵՄ Էկոպիտակ», այդ տեղեկությունները կարող են ներառվել.
 - զ) պահարանի էներգասպառումը (Է24ժ) 24 ժամվա ընթացքում եւ տարեկան էներգասպառումը կՎտժ-ով, որը հաշվարկվում է IX հավելվածին համապատասխան եւ կլորացվում դեպի ամենամոտ ամբողջ թիվը.
 - է) յուրաքանչյուր խցիկի զուտ ծավալը.
 - ը) կլիմայական դասը՝ IX հավելվածի 3-րդ աղյուսակին համապատասխան.
 - թ) թույլ հզորությամբ պահարանների համար՝ հետևյալ նախադասությունը.
«Այս սարքավորումը նախատեսված է միջավայրի մինչեւ 25 °C

ջերմաստիճանում օգտագործման համար եւ հետեւաբար պիտանի չէ մասնագիտացված տաք խոհանոցներում օգտագործման համար».

ժ) գերհզոր պահարանների համար՝ հետեւյալ նախադասությունը.
«Այս սարքավորումը նախատեսված է միջավայրի մինչեւ 40 °C ջերմաստիճանում օգտագործման համար»:

2. Մեկ տեղեկաթերթիկում կարող է ներառվել նույն մատակարարի կողմից մատակարարված մի շարք մասնագիտացված սառնարանային պահարանների մոդելների վերաբերյալ տեղեկություններ:
3. Տեղեկաթերթիկի տեղեկությունները կարող են տրամադրվել պիտակի պատճենի ձեւով՝ գունավոր կամ սեւ ու սպիտակ, ինչի դեպքում 1-ին կետում նշված եւ պիտակի վրա չցուցադրված տեղեկությունները նույնպես պետք է տրամադրվեն:

*ՀԱՎԵԼՎԱԾ V***Տեխնիկական փաստաթղթերը**

1. 3(1)(գ) հոդվածում նշված տեխնիկական փաստաթղթերը ներառում են՝
 - ա) մատակարարի անվանումը եւ հասցեն.
 - բ) մասնագիտացված սառնարանային պահարանի մոդելի վերաբերյալ բավարար նկարագրություն, որպեսզի հնարավոր լինի հստակորեն նույնականացնել այն.
 - գ) անհրաժեշտության դեպքում՝ հղումներ կիրառված ներդաշնակեցված ստանդարտների մասով.
 - դ) անհրաժեշտության դեպքում՝ մյուս օգտագործված տեխնիկական ստանդարտները եւ մասնագրերը.
 - ե) մատակարարի համար պարտավորություններ սահմանելու լիազորություններ ունեցող անձի նույնականացումը եւ ստորագրությունը.
 - զ) IX հավելվածում նշված տեխնիկական պարամետրերի չափման եւ հաշվարկման արդյունքները:
2. Եթե մասնագիտացված սառնարանային պահարանի կոնկրետ մոդելի համար տեխնիկական փաստաթղթերի փաթեթում ներառված տեղեկությունները ստացվել են համարժեք մասնագիտացված սառնարանային պահարանի հիման վրա կատարված հաշվարկի արդյունքում, ապա տեխնիկական փաստաթղթերը պետք է ներառեն այդ հաշվարկների, ինչպես նաեւ կատարված հաշվարկների ճշգրտությունն ստուգելու համար մատակարարների կողմից նախաձեռնված

փորձարկումների մանրամասները: Տեխնիկական տեղեկությունները պետք է ներառեն նաեւ մասնագիտացված սառնարանային պահարանի այն բոլոր համարժեք մոդելների ցանկը, որոնց առնչվող տեղեկությունները ստացվել են նույն եղանակով:

3. Նշված տեխնիկական փաստաթղթերում ներառված տեղեկությունները կարող են միացվել 2009/125/ԵՄ հրահանգով սահմանված միջոցներին համապատասխան տրամադրված տեխնիկական փաստաթղթերին:

ՀԱՎԵԼՎԱԾ VI

Տրամադրվելիք տեղեկություններն այն դեպքերում, երբ վերջնական սպառողները չեն կարող տեսնել ցուցադրված արտադրանքը՝ բացառությամբ համացանցի միջոցով տեսնելու

1. Եթե վերջնական սպառողները չեն կարող տեսնել ցուցադրված արտադրանքը, բացառությամբ համացանցի միջոցով տեսնելու, տեղեկությունները տրամադրվում են հետևյալ հերթականությամբ՝
 - ա) մոդելի էներգաարդյունավետության դասը՝ համաձայն II հավելվածի.
 - բ) տարեկան էներգասպառումը՝ արտահայտված կՎտժ/տարի-ով՝ կլորացված դեպի ամենամոտ ամբողջ թիվը եւ հաշվարկված IX հավելվածին համապատասխան.
 - գ) յուրաքանչյուր խցիկի զուտ ծավալը.
 - դ) կլիմայական դասը՝ IX հավելվածին համապատասխան:
2. Եթե տրամադրվում է արտադրանքի տեղեկաթերթիկում պարունակվող այլ տեղեկություններ, այն պետք է համապատասխանի IV հավելվածում նշված ձևին եւ հերթականությանը:
3. Սույն հավելվածում նշված տեղեկությունները տպագրվում կամ ցուցադրվում են ընթեռնելի տառատեսակով եւ տառաչափով:

*ՀԱՎԵԼՎԱԾ VII***Համացանցի միջոցով վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի դեպքում տրամադրվելիք տեղեկությունները**

1. Սույն հավելվածի 2-5-րդ կետերի իմաստով կիրառվում են հետևյալ սահմանումները.
 - ա) «դիսփլեյի մեխանիզմ» նշանակում է ցանկացած էկրան, այդ թվում՝ սենսորային էկրան կամ ինտերնետային բովանդակությունն օգտագործողներին ցուցադրելու համար օգտագործվող այլ վիզուալ տեխնոլոգիաներ.
 - բ) «ներկառուցված դիսփլեյ» նշանակում է վիզուալ միջերես, որում պատկերը կամ տվյալների հավաքածուն հասանելի է դառնում մկնիկի կտտոցով, մկնիկի նշորդը դրա վրայով անցկացնելով կամ մեկ այլ պատկերի կամ տվյալների հավաքածուի՝ սենսորային էկրանի ընդլայնմամբ.
 - գ) «սենսորային էկրան» նշանակում է հպմանն արձագանքող էկրան, ինչպես, օրինակ՝ պլանշետային համակարգչի, սալակարգչի կամ սմարթֆոնի էկրանը.
 - դ) «այլընտրանքային տեքստ» նշանակում է տեքստ, որը տրամադրվում է որպես գրաֆիկի այլընտրանք՝ թույլ տալով ներկայացնել տեղեկությունները ոչ գրաֆիկական ձևով այն դեպքում, երբ ցուցասարքերը չեն կարող վերարտադրել գրաֆիկը, կամ որպես օգնություն հասանելիությանը, ինչպես օրինակ՝ տեքստի մուտքագրումը ձայնի սինթեզի հավելվածներ:
2. 3(1)(բ) հոդվածի համաձայն՝ մատակարարների կողմից տրամադրված համապատասխան պիտակը ցուցադրվում է դիսփլեյի մեխանիզմի վրա՝

արտադրանքի գնի կողքին՝ համաձայն 3(2) հոդվածում նշված ժամանակացույցի: Պիտակի չափը պետք է լինի հստակ կերպով տեսանելի եւ ընթեռնելի եւ համապատասխանի III հավելվածի 3-րդ կետում նշված չափին: Պիտակը կարող է ցուցադրվել ներկառուցված դիսփլեյի միջոցով, որի դեպքում պիտակի հասանելիության համար օգտագործվող պատկերը պետք է համապատասխանի սույն հավելվածի 3-րդ կետում սահմանված մասնագրերին: Ներկառուցված դիսփլեյի կիրառման դեպքում պիտակը հայտնվում է մկնիկի առաջին կտտոցով, մկնիկի նշորդը դրա վրայով անցկացնելով կամ պատկերի վրա սենսորային էկրանի ընդլայնմամբ:

3. Պիտակի հասանելիության համար օգտագործվող պատկերը ներկառուցված դիսփլեյի դեպքում՝

ա) պիտակի վրա նշված արտադրանքի էներգաարդյունավետության դասին համապատասխանող գույնով սլաք է.

բ) սլաքի վրա սպիտակ գույնով ցույց է տալիս արտադրանքի էներգաարդյունավետության դասը՝ գնի համար օգտագործվող նույն տառաչափով. եւ

գ) ունի հետեւյալ երկու ձեւաչափերից մեկը՝



4. Ներկառուցված դիսփլեյի դեպքում պիտակի ցուցադրման հաջորդականությունը հետեւյալն է՝

ա) սույն հավելվածի 3-րդ կետում նշված պատկերը ցուցադրվում է դիսփլեյի մեխանիզմի վրա՝ արտադրանքի գնի կողքին.

բ) պատկերը պարունակում է պիտակին արված հղում.

գ) պիտակը ցուցադրվում է մկնիկի կտտոցով, մկնիկի նշորդը դրա վրայով անցկացնելով կամ պատկերի վրա սենսորային էկրանի ընդլայնմամբ.

- դ) պիտակը ցուցադրվում է ելնող պատուհանով, նոր ներդիրով, նոր էջով կամ էկրանի ներդրված դիսփլեյով.
 - ե) սենսորային էկրաններին պիտակի խոշորացման համար կիրառվում են սենսորային խոշորացման սարքվածքների պայմանական նշանները.
 - զ) պիտակի ցուցադրությունն ավարտվում է «փակել» ընտրանքի կոճակի կամ փակելու այլ ստանդարտ մեխանիզմի միջոցով.
 - է) գրաֆիկի համար այլընտրանքային տեքստը, որը պետք է ցուցադրվի պիտակի ցուցադրության ձախողման դեպքում, արտադրանքի էներգաարդյունավետության դասն է՝ գնի համար օգտագործված նույն տառաչափով:
5. 3(1)(դ) հոդվածի համաձայն՝ մատակարարների կողմից տրամադրված՝ արտադրանքի համապատասխան տեղեկաթերթիկը ցուցադրվում է դիսփլեյի մեխանիզմի վրա՝ արտադրանքի գնի կողքին: Արտադրանքի տեղեկաթերթիկի չափը պետք է լինի այնպիսին, որ այն լինի հստակ տեսանելի եւ ընթեռնելի: Արտադրանքի տեղեկաթերթիկը կարող է ցուցադրվել ներկառուցված դիսփլեյի միջոցով, որի դեպքում տեղեկաթերթիկի հասանելիության համար օգտագործվող հղման վրա հստակ եւ ընթեռնելի ձևով նշվում է «Արտադրանքի տեղեկաթերթիկ»:
- Ներկառուցված դիսփլեյի օգտագործման դեպքում արտադրանքի տեղեկաթերթիկը հայտնվում է մկնիկի առաջին կտտոցով, մկնիկի նշորդը դրա վրայով անցկացնելով կամ հղման վրա սենսորային էկրանի ընդլայնմամբ:

ՀԱՎԵԼՎԱԾ VIII

**Մասնագիտացված սառնարանային պահարանների համար
էներգաարդյունավետության ինդեքսի հաշվարկի մեթոդը**

Մասնագիտացված սառնարանային պահարանի մոդելի էներգաարդյունավետության ինդեքսի (ԷԱԻ) հաշվարկի համար պահարանի տարեկան էներգասպառումը համեմատվում է դրա տարեկան ստանդարտ էներգասպառման հետ:

ԷԱԻ-ն հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$EAI = (SEU/USEU) * 100$$

Որտեղ՝

$$SEU = E_{24h} * n_{iq} * 365$$

SEU-ը պահարանի տարեկան էներգասպառումն է՝ արտահայտված կՎտժ/տարի-ով.

E_{24h} -ն պահարանի էներգասպառումն է՝ 24 ժամվա ընթացքում.

n_{iq}-ն ուղղիչ գործակիցն է, որը պետք է կիրառվի միայն թույլ հզորությամբ պահարանների համար՝ համաձայն IX հավելվածի 2-րդ կետի.

$$USEU = 2 * \sigma_q + P$$

USEU-ը պահարանի ստանդարտ տարեկան էներգասպառումն է՝ արտահայտված կՎտժ/տարի-ով.

σ_q-ն սարքավորման զուտ ծավալն է, որը պահարանի բոլոր խցիկների զուտ ծավալների հանրագումարն է՝ արտահայտված լիտրերով:

Չափման արժեքը եւ քանակի արժեքը տրված են 2-րդ աղյուսակում:

Աղյուսակ 2

Չափման եւ Քանակի գործակիցների արժեքները

Կատեգորիա	Չափման արժեք	Քանակի արժեք
Ուղղահայաց տիպի՝ պաղեցնող	1,643	609
Ուղղահայաց տիպի՝ սառեցնող	4,928	1 472
Կանգնակ տիպի՝ պաղեցնող	2,555	1 790
Կանգնակ տիպի՝ սառեցնող	5,840	2 380

*ՀԱՎԵԼՎԱԾ IX***Չափումը եւ հաշվարկումը**

1. Սույն կանոնակարգի պահանջների հետ համապատասխանությունն ապահովելու եւ ստուգելու նպատակներով պետք է իրականացվեն չափումներ եւ հաշվարկներ՝ ներդաշնակեցված այնպիսի ստանդարտների կիրառմամբ, որոնց հղումային համարները այդ նպատակով հրապարակվել են *Եվրոպական Միության պաշտոնական տեղեկագրում*, կամ հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի այլ մեթոդների կիրառմամբ, որոնք հիմնվում են համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից մեթոդների վրա: Դրանք պետք է համապատասխանեն սույն հավելվածում սահմանված տեխնիկական սահմանումներին, պայմաններին, հավասարումներին եւ պարամետրերին:
2. Մասնագիտացված սառնարանային պահարանների տարեկան էներգասպառման արժեքները եւ էներգաարդյունավետության ինդեքսը սահմանելու համար պետք է կատարվեն չափումներ՝ հետեւյալ պայմաններով՝

- փորձաստուգման փաթեթների ջերմաստիճանը պետք է լինի $-1\text{ }^{\circ}\text{C}$ -ի եւ $5\text{ }^{\circ}\text{C}$ -ի միջակայքում՝ պաղեցման պահարանների համար, եւ $-15\text{ }^{\circ}\text{C}$ -ից ցածր՝ սառեցման պահարանների համար.
 - միջավայրի պայմանները պետք է համապատասխանեն կլիմայական 4-րդ դասին, ինչպես մանրամասն նշված է 3--րդ աղյուսակում՝ բացառությամբ թույլ հզորությամբ պահարանների, որոնք պետք է փորձաստուգվեն կլիմայական 3-րդ դասին համապատասխանող միջավայրի պայմաններում: Պաղեցման աշխատանքային ջերմաստիճանում թույլ հզորությամբ պահարանների մասով 1,2 ուղղիչ գործակիցները, իսկ սառեցման աշխատանքային ջերմաստիճանում թույլ հզորությամբ պահարանների մասով 1,1 ուղղիչ գործակիցները պետք է կիրառվեն փորձաստուգման այն արդյունքների մասով, որոնք ձեռք են բերվել թույլ հզորությամբ պահարանների առնչությամբ.
 - մասնագիտացված սառնարանային պահարանները պետք է փորձաստուգվեն՝
 - պաղեցման աշխատանքային ջերմաստիճանում, եթե համակցված տիպի պահարանը բաղկացած է առնվազն մեկ խցիկից, որը նախատեսված է բացառապես պաղեցման աշխատանքային ջերմաստիճանի համար,
 - պաղեցման աշխատանքային ջերմաստիճանում, եթե մասնագիտացված սառնարանային պահարանն ունի միայն մեկ խցիկ՝ նախատեսված բացառապես պաղեցման աշխատանքային ջերմաստիճանի համար,
 - սառեցման աշխատանքային ջերմաստիճանում՝ մյուս բոլոր դեպքերում:
3. Կլիմայական 3-րդ, 4-րդ եւ 5-րդ դասերի միջավայրի պայմանները ներկայացված են 3-րդ աղյուսակում:

Աղյուսակ 3

Կլիմայական 3-րդ, 4-րդ եւ 5-րդ դասերի միջավայրի պայմանները

Փորձարկման խցիկի կլիմայական դասը	Օդի ջերմաստիճանը՝ ըստ չոր ջերմաչափի, °C	Հարաբերական խոնավությունը, %	Ցողի կետը, °C	Ջրային գոլորշու զանգվածը չոր օդում, գ/կգ
3	25	60	16,7	12,0
4	30	55	20,0	14,8
5	40	40	23,9	18,8

*ՀԱՎԵԼՎԱԾ X***Շուկայի վերահսկողության նպատակներով
իրականացվող ստուգման ընթացակարգը**

3-րդ եւ 4-րդ հոդվածներով սահմանված պահանջներին արտադրանքի համապատասխանությունը գնահատելու նպատակներով անդամ պետությունների մարմինները կիրառում են ստուգման հետեւյալ ընթացակարգը՝

1. Անդամ պետությունների մարմինները փորձաստուգում են յուրաքանչյուր մոդելի մեկ միավոր:
2. Մոդելը համարվում է կիրառելի պահանջներին համապատասխանող, եթե բավարարում է հետեւյալ պահանջները՝
 - ա) չափված ծավալը նոմինալ արժեքից ցածր չէ ավելի, քան 3 տոկոսով,
 - բ) էներգասպառման չափված արժեքը նոմինալ արժեքից (է24ժ) բարձր չէ ավելի, քան 10 տոկոսով:
3. Եթե 2-րդ կետում նշված արդյունքը չի ապահովվում, ապա անդամ պետությունների մարմինները փորձաստուգման համար պատահականության սկզբունքով ընտրում են նույն մոդելի երեք լրացուցիչ միավոր: Որպես այլընտրանք՝ ընտրված երեք լրացուցիչ միավորները կարող են ընտրվել մեկ կամ մի քանի տարբեր մոդելներից, որոնք տեխնիկական փաստաթղթերում նշվել են որպես համարժեք արտադրանք:
4. Մոդելը համարվում է կիրառելի պահանջներին համապատասխանող, եթե բավարարում է հետեւյալ պահանջները՝
 - ա) չափված ծավալի մասով երեք միավորների միջին ցուցանիշը նոմինալ արժեքից ցածր չէ ավելի, քան 3 տոկոսով,

բ) էներգասպառման չափված արժեքի երեք միավորների միջին ցուցանիշի մասով նոմինալ արժեքից (E24ժ) բարձր չէ ավելի, քան 10 տոկոսով:

5. Եթե 4-րդ կետում նշված արդյունքները չեն ապահովվում, ապա տվյալ մոդելը եւ մասնագիտացված սառնարանային պահարանների մյուս բոլոր համարժեք մոդելները համարվում են սույն կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող: Անդամ պետությունների մարմինները տրամադրում են փորձարկման արդյունքները եւ այլ համապատասխան տեղեկություններ այլ անդամ պետությունների մարմիններին եւ Հանձնաժողովին մոդելի անհամապատասխանության վերաբերյալ որոշումը կայացնելուց մեկ ամսվա ընթացքում:

Անդամ պետությունների մարմինները կիրառում են VIII եւ IX հավելվածներով սահմանված չափման եւ հաշվարկման մեթոդները:

Սույն հավելվածում սահմանված թույլատրելի շեղումները կիրառվում են միայն անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից չափված պարամետրերի ստուգման նկատմամբ՝ ներկայացնելով ստուգման փորձարկումների չափման արդյունքների թույլատրելի տատանումները, եւ չեն օգտագործվում մատակարարի կողմից տեխնիկական փաստաթղթերում արժեքների սահմանման կամ այդ արժեքների մեկնաբանման ժամանակ՝ պիտակավորման դասակարգումը բարելավելու կամ ցանկացած միջոցով ավելի լավ արդյունավետություն ապահովելու նպատակով:
